ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 253-Ա/2 **26.02.2020թ**

ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԼԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԵՐԳԻՆ ԵՎ ՎԵՐՈՆԱՅՈՒՄ «ԼԱԳՈ ԴԻ ԳԱՐԴԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Իտալիայի Միլանում կայանալիք համերգին և Վերոնայում «Լագո դի Գարդա» միջազգային փառատոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու Հայորդյաց տան մանկապատանեկան երգչախմբի մասնակցությունն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Իտալիայի Միլանում կայանալիք համերգին և Վերոնայում «Լագո դի Գարդա» միջազգային փառատոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու Հայորդյաց տան մանկապատանեկան երգչախմբի մասնակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168 Արվեստների ծրագիր» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Միջազգային երաժշտական նախագծերին կոլեկտիվների մասնակցություն») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 4180.7 հազար (չորս միլիոն

հարյուր ութսուն հազար յոթ հարյուր) դրամ 2020 թվականի մարտ ամսին Իտալիայի Միլանում կայանալիք համերգին և Վերոնայում «Լագո դի Գարդա» միջազգային փառատոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու Հայորդյաց տան մանկապատանեկան երգչախմբի 14 (տասնչորս) մասնակցի Երևան-Միլան-Երևան ճանապարհածախսը հոգալու համար:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարին սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝

1) հսկողություն իրականացնել պայմանագրի, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվության ներկայացման ժամկետի կատարման նկատմամբ;

2) պայմանագրով նախատեսված բովանդակային հաշվետվությունն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում դրա վերաբերյալ եզրակացությունը տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը;

3) մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության նախագիծը և բովանդակային հաշվետվությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2020 թ.
N հրամանի

ԾՐԱԳԻՐ

Իտալիայի Միլանում կայանալիք համերգին և Վերոնայում «Լագո դի Գարդա» միջազգային փառատոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու Հայորդյաց տան մանկապատանեկան երգչախմբի մասնակցության

1	Կազմակերպության անվանում	«Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Գյումրի, Սայաթ-Նովայի 4
3	Ծրագրի անվանում	Իտալիայի Միլանում Կոմիտասի 150-ամյակին նվիրված համերգին և Վերոնայում «Լագո դի Գարդա» միջազգային փառատոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու Հայորդյաց տան մանկապատանեկան երգչախմբի մասնակցություն
3.1	Բովանդակություն	Համերգային ծրագիր. Vivaldi «Gloria-Laudamus te» Andrea Ferante-Laudate dominum Ե.Երկանյան «Սարերը ման եմ եկել» Կոմիտաս՝ «Դուն հալալ մերիկ» «Եղնիկ», «Լուսնակն անուշ», «Երևան բաղ եմ արել», «Սարեն գուկա ջուխտմ ղոչ», «Սևա չոբանի շունը», «Էրվում եմ», «Առնեմ էրթամ», «Էս առուն», Ռ.Պետրոսյան «Աղբյուր ես չորանալ մի», Ա.Սաթյան «Իմ Հայաստան», Ռ.Պետրոսյան «Երազ իմ երկիր», Տ.Մանսուրյան «Տաղ չորս տարերաց»
3.2	Նպատակ	Մասնակցությունը միջազգային փառատոնին կստեղծի նոր հնարավորություններ առավել մեծ ցուցանիշներ արձանագրելու, ավելի մեծ բարձունքների հասնելու, արտերկրում հայ երաժշտարվեստը աշխարհին նեկայացնելու:
3.3	Անցկացման ժամկետ	25.03.2020 թ.-30.03.2020 թ.
3.4	Անցկացման վայր	Իտալիա՝ Միլան,Վերոնա
3.5	Ակնկալվող արդյունքներ	Բարձր մրցանակային տեղեր, պարգևներ, երգչախմբի միջազգային ճանաչում, հանդիսատեսի մեծ լսարան, շփումներ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ՝ հաղորդակից դարձնելով հայ ազգային երաժշտությանը:
4.	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	մոտ 10000 հանդիսատես